

Քիւ 24479
Փետրուար 27, 1975

Հոգեշնորհ
Տ. Եղիշէ Ե. Վրդ. Նիզիրեան
Հովիւ Ս. Երրորդութիւն Նկեղեցւոյ
Նախագահ Ժեական Խորհուրդի
Գէմպրիճ, Մասս.

Սիրելի Հայր Եղիշէ,

Սաացած ենք Փետրուար 24, 1975 թուակիր 2եր տեղեկագիրը, որով կը
հաղորդէք թէ 2եր նախագահութեամբ Փետրուար 14ին գումարուած համայնրիդ
Ժեական ժողովին մէջ կատարուած է Ժեական Խորհուրդի գլխգանդամոց ընտ-
րութիւնը, եւ ներկայացնելով բուէարկութեան արգիւնը՝ կը խնդրէք
ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Սկառի ունենալով որ 2եր Ժեական ժողովը տեղի ունեցած է Թեմական
կանոնադրութեան արամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Ժեա-
կան Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել Ժեական Խորհուրդի նորընտիր
Դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը, ինչպէս
նաեւ համայնրիդ ելեւմտական հաշուեկշռի ներգրկեալ տեղեկագիրը:

Օրհնելով Ժեական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք 2եզի եւ 2եր
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի
պայծառութիւնը Ս. Նկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնրիդ մեր
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐԵՆԴԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ

Տորթ. Մայրըլ Խուլլուկեան
ժորճ Յարութիւնեան
Տիկ. Էն Հինդլեան
Ուիլեմ Մարթին, կրտսեր
ժորճ Յակոբեան
Տիկ. Հելիյն Տորեան